ՆԱԶԱՐ.– (Ժպտալով) Սրա՞նք են թագուհիները: Ինչ էլ փամփլիկնե՛րն են: Նստեցէ՛ք: (Թագուհիները նստում են:) Ա՛յ հիմի բաղչում սուփրա կբանան, գնանք ծաղիկների մէջ նստենք, քեֆ անենք: (Սենեկապետին) Գեադա՞: Գնա ասա լաւ չարազով սուփրա գցեն: Սազանդար կանչի, գան մեզ բաղչա տանեն: (Սենեկապետը գնում է եւ իսկոյն վերադառնում: Նազարը դառնում է պալատականներին:) Դուք էլ մեզ ճամփու կդնէք բաղչա ու յետոյ կերթաք ձեր գործին: Տէրութեան գործերին լաւ աչք կանէք, գործերը կարգին են, թէ չէ կաշիներդ մաշկել կտամ, հա՛ռռամզադաներ: Հա՛ա՛ա : Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ.– Իմացանք, Կենտրոն տիեզերաց:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հա՛մմ, իմացա՛նք:

ՆԱԶԱՐ.– Քե՞զ ով ասաւ բոռաս խանումների մօտ, իշի՛ կտոր: (Դիմում է թագուհիներին) Է, խանումներս, ո՞նց էք, քեֆներդ, հալներդ:

ԹԱԳՈՒՀԻՆԵՐ.– (Խունջիկ-մունջիկ անելով ծիծաղում են:)

Ներս են մտնում սազանդարները եւ խոնարհ ողջունում են Նազարին:

ՆԱԶԱՐ.– Ապա՞, գեադա, մի Հերաթի վեր քաշէք տեսնենք: Խանումներ, գնանք: (Թագը ծռում է գլխին: Թագուհիները քրքջում են: Սազանդարները նուագում են, երգում Հերաթի:)

ՈՒՍՏԻԱՆ.– (Ներս մտնելով՝ սկսում է ականջ դնել նուագին, յետոյ առաջ է գալիս դէպի նուագաբեմ) Հը՛… (Սազանդարները նուագում են եւ ապա մեղմացնում նուագը, Ուստիանը առաջ գալով) Տեսա՞ք դուք փսլնքոտ Նազարին: Երկու էշի գարի չէր կարում բաժնի: Տեսա՞ք ինչ փառքի հասա՞ւ: Մի՛տք ես անում, մի՛տք, էս աշխարհքի բանը, ճաքում ես, տրաքւում, թէ ախր էս բանը ո՞նց է լինում: Չեմ իմանում, բա՛խտ է, էլի՞: (Սազանդարները նուագում են ու կրկին նուագը մեղմացնում:) Տեսա՞ք ոնց է սարսաղացրել աշխարհքն ու վրայն ծիծաղում, թէ աշխարհքը սարսաղ է ու սարսաղ պիտի գնա՞: Դու էն սարսաղներին ասա, թէ ո՞նց են կատու կտրել էդ նապաստակի առաջին: Բա՛խտ է, էլի: (Սազանդարները նուագում են: Թագուհիները քրքչում են:) Հա՛, մե՛ծ գործի վրայ էք: Բախտաւորներ: Հո՛ղեմ ձեր անամոթ գլուխը: Նա էլ որ երեսին ամոթ չունի՞: Հը՛մ: (Մտածելով ու գլուխը թափ տալով) Դու էդ թող՝ բախտին մտիկ, որ միշտ բերում է: Բա՛խտ է, էլի: (Սազանդարները նուագում են պար; Թագուհիները հերթով պարում են:)

ՆԱԶԱՐ.– Այ ջա՛ն… (Ինքն էլ է պարում:)

ՈՒՍՏԻԱՆ.– Մի կաց, ես քո ապո՛ւրը կեփեմ: (Անկիւնից վերցնում է մահակը:)